

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱԻՐԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՐԲԱՌԻ ՎՆԱՍԱՐԱՐՆԵՐԸ

Մեր տեղն ատոր կըսեն գայլու շարական.

«Առակք», Գ. Եպ. Այվազովսկիի.

Հայաստանի Պետհրատը վերջին տարիներս գովելի գործ է կատարում՝ հրատարակելով մեռած կամ իրենց գրական գործունեութիւնը ~~աւարտած~~ հեղինակների լիակատար երկերը: Մ. Եպիսկոպոս, արդէն ըստ էն տեսել Սայեաթ Նովայի, Գ. Սունդուկեանցի, Յ. Պարոնեանի, Շիրվանզադէի, Նար Դոսի, Դուրեանի, Մեծարեանցի, Չարենցի հեղինակութիւնները. սպառնալուծում են եւ ուրիշները: Մի գործ, որ չի փարձիւ չողջունել:

Մինչեւ այժմ լոյս տեսած հատորների շարքում, ինչպէս տեսաք կան եւ Սայեաթ Նովայի ու Գարրիէլ Սունդուկեանցի երկերը — Երկու մեծ տաղանդի տէր հեղինակների, որոնք ստեղծագործել են բացառապէս Թիֆլիսի բարբառով:

Ներկայ յօդածի նպատակն է՝ ցոյց տալ, թէ այդ երկու հեղինակների երկերի խմբագրւոյնները՝ Գ. Լեւոնեան ու Ս. Յարութիւնեան՝ ինչպէ՞ս են կատարել իրենց վրա դրած պարտականութիւնը: Նախ քան այդ, սակայն, մի քանի խօսք իւրաքանչիւր հատորի մասին առանձին — առանձին:

Ա. — 1931 թւին, Գ. Լեւոնեանի խմբագրութեամբ լոյս տեսած Սայեաթ Նովայի երկերի հաւաքածուն չի կարող նկատուել լիակատար, որովհետեւ նրա մէջ մտել են միայն հայերէն երգերը, իսկ վրացերէններն ու թուրքերէնները դուրս են մնացել: Յառաջաբանում Գ. Լեւոնեանը տւել է Սայեաթ Նովայի կենսագրութիւնը համաձայն իր ունեցած տւեալների եւ գրքին կցել է Սայեաթ Նովայի մասին գոյութիւն ունեցող գրականութեան ցանկը, ինչպէս եւ դրժւար հասկանալի բառերի բառարան, որին իրրեւ հիմք ընդունւած է Սայեաթ Նովայի երգերի առաջին հրատարակիչ Գ. Ախլերդեանի տւած բառերի բացատրութիւնը: Գ. Լեւոնեանը յուրջ աշխատանք է կատարել եւ Ախլերդեանի բառարանի մէջ մտցրել մի շարք ուղղումներ ու լրացումներ:

Սայեաթ Նովայի երգերի բնագիրների վրա, բացի Գ. Ախվերդեանից, Տէր-Աղեքսանդեանից եւ Գ. Ասատուրից, որոնք մեծ ջանասիրութիւն եւ սրատեսութիւն են ցոյց տւել, աշխատել են եւ շատ ուրիշներ, որոնց շարքին առանձնապէս աչքի է ընկել Յ. Թումանեանը, բայց մանաւանդ Ն. Աղբալեանը («Հորիզոն»-ում եւ «Հանդէս Ամսօրեայ»-ում)։ սրա առաջարկած բոլոր ուղղումները Ախվերդեանի բնագրում՝ ընդունելի են։

Սայեաթ Նովայի երգերի բնագրի հրատարակութեան խնդիրը Գ. Լեւոնեանը մի քիչ տարօրինակ կերպով է հասկացել։ Վերջինս նախ տալու նախորդների եւ իր կողմից սրբագրած բնագիրները՝ նա բոլորովին անիմփոխ, առանց որեւէ ուղղումի արտատպել է առաջին տպագրութեան բնագիրը, իսկ քննադատութեան կատարած սրբագրութիւններն ու լրացումները դրել է ծանօթութիւնների մէջ, զրքի վերջը, առանց կապելու բուն բնագրի հետ։ Արդիւնքը ստացւել է կատարեալ չիոթ ու քառ։

Բ. — Գարրիէլ Սունդուկեանցի երկերը հրատարակւած են 1934 թ. ոմն Ս. Յարութիւնեանի*) խմբագրութեամբ։ Վերջինս շատ աշխատանք չունէր կատարելիք բնագիրները պատրաստելու համար, քանի որ Սունդուկեանցը ինքը նախապատրաստել էր իր երկերի լիակատար ժողովածուի հրատարակութիւնը եւ նոյն իսկ, մահւանից առաջ, լոյս ընծայել համարեա բոլոր աշխատութիւնները՝ կատարելով բնագրի սրբագրութիւնները։

Սունդուկեանցի երկերի Պետհրատի հրատարակութիւնը ընդհանուր առմամբ գոհացուցիչ է, կատարւած է որոշ սխառմով եւ օժտւած է Սունդուկեանցի ստեղծագործութեան զարգացումն ըմբռնելու համար անհրաժեշտ եղող պատմա — գրական նիւթով։ Սակայն, կարելի է ճիշտ համարել այն պարագան, որ Սունդուկեանցի եւ նրա հոգեկան ապրումների բնորոշման տեսակէտից իւրաքանչիւր գրւածքին կցւած խիստ կարեւոր յառաջաբանները խմբագիրը զետեղել է ոչ թէ հեղինակի երկերի բնագրում, այլ ծանօթութիւնների

*) Ս. Յարութիւնեանի անունը եւ չեմ հանդիպել հայոց գրականութեան մէջ, բայց Հայաստանում նա, ըստ երեւոյթի, «Սունդուկեանցի մասնագետ» է համարուում։ Այսպէս, «Հայ Գրականութեան Պատմութեան», 1933 թ. Բ. հատոր, էջ 289 — 320-ում նա ունի Սունդուկեանցի մասին մի յօդւած։ Նրա խմբագրութեամբ լոյս է տեսել «Պէպօ»-ն առանձին գրով։ Նա գրել է Սունդուկեանցի մասին մի յօդւած «Խորհրդ. Հայաստան»-ում եւ վերջերս էլ լոյս է ընծայել նրա մի քանի քատերակները ժողովրդական հրատարակութեամբ։

մէջ, մանրատառ ու ոչնչով չնշմարտող, որով նրանք խառնուում են պ. Յարութիւնեանի դատողութիւնների հետ:

Հատորին կցւած է Սունդուկեանցի մասին գոյութիւն ունեցող գրականութեան ցանկը, այլեւ դժւար հասկանալի բառերի բառարան: Այս վերջինի գլխին ինչ որ տարօրինակ բան է եկել: Խմբագիրը բառերի բացատրութիւն կազմելը յանձնել է Թիֆլիսահայ բարբառի այժմւայ լաւագոյն մասնագէտ Գ. Սաստուրին, որ անթերի կերպով կատարել է իրեն վստահւած գործը: Բառարանի մէջ դրւելիք բառերի ցանկը, սակայն, կազմել է ինքը Յարութիւնեանը, որ հարիւրից ոչ պակաս բացատրութեան կարօտ բառեր դուրս է ձգել: Նմանապէս բաց են թողնւած, ըստ երեւոյթի խմբագրի անգիտութեան հետեւանքով, եւ բացատրութեան կարօտ խօսքերն ու արտայայտութիւնները:

Հատորի յառաջաբանն ու, մասամբ, մեկնաբանութիւնները գրւած են մարքս-լենինեան ոճով: Մի բան, որ բնաւ չի բխում գործի հանգամանքից եւ արդիւնք է աւելի հեղինակի ոչնչով չարդացող գեր - ջանասիրութեան: Հետեւանքը եղել է յառաջաբանի, այսպէս ասած փէտացում. փաստեր կան, բայց կեանք ու հոգի չկայ: Թէեւ կարող է պատահել, որ այդ փէտացումը բխում է առհասարակ խմբագրի բնաւորութիւնից. նա կարծես սիրում էլ է Սունդուկեանցի ստեղծագործութիւնը, բայց ներկայացնում է առանց ոգեւորութեան, բոլորովին անկեանք:

Այս նախնական գիտողութիւններից յետոյ, անցնենք մեզ դրադեցնող բուն հարցին: Երկու խմբագիրների առջեւ էլ դրւած է եղել մի կարեւոր խնդիր՝ տալ Սայեաթ Նովայի եւ Սունդուկեանցի բընադիրները երեւանեան նոր ուղղագրութեամբ: Այդ ուղղագրութիւնը, հակառակ իր խիստ հիմնական թերութիւնների, ի վիճակի է անսխալ, յամենայն դէպս հետեւողական, ասել է եւ հասկանալի ձեւով արտայայտելու Թիֆլիսի բարբառի հնչիւնաբանական առանձնայատկութիւնները: Դժբախտաբար, երկու խմբագիրներն էլ յանցաւոր անփութութիւն կամ տգէտի ապերաստութիւն են ցոյց տըւել իրենց վստահւած գործի վերաբերմամբ:

Թիֆլիսի հայ բարբառը ունի հետեւեալ ձայնաբանական առանձնայատկութիւնները.՝

1). Բառի սկզբի ե տառը միավանկ բառերի մէջ արտասանուում է ինչպէս յի (մայիս բառի մէջ), օրինակ՝ ես - յիս, երբ - յիպ, եղ - յիղ: Երկու եւ աւելի վանկ ունեցող բառերի մէջ ե հաւասար է է-ի. օրինակ, երկինք - էրկինք, երկաթ - էրկաթ, երեխայ - էրէխայ եւայլն:

2). Ու տառը բառի սկզբին հաւասար է վնւ-ի. օրինակ, որդի-վուրթի, որբ-վուրփ, ոտք-վուտ: Բառի մէջ շեշտով ուն հնչւում է ինչպէս ու. օրինակ, դործ-դուրծ, չորս-չուրս: Բառի մէջը անշեշտ ուն պահում է օ հնչիւնը:

3). Ոյ հաւասար է ու-ի. լոյս - լուս, քոյր - քուր անոյշ-անուշ:

4). Իւ հաւասար է ու-ի. արիւն - արուն, ալիւր - ալուր, հարիւր - հարուր, հիւր - հուր:

5). ւ եւ վ հնչւում են միեւնոյն ձեւով: Ախվերդեանը եւ Տէր-Աղեքսանդրեանը պարզաբանութեան համար գրում են՝ տեսաւ, արաւ, բայց բոլորովին ուղիղ է նոր ուղադրութեամբ եւ պարտադիր՝ տեսավ, արավ:

6). Ու (վանկային), բառի մէջտեղը, դրական լեզւում ըվ (աստուած - աստուված) արտասանուող հնչիւնը Թիֆլիսի բարբառում դառնում է ոչ-վանկային եւ հնչւում է որպէս պարզ վ. օրինակ, աստուած - աստված, աղուէս - աղվէս, օրուայ - օրվայ, լեզուի լեզվի, բռնուեցաւ - բռնվեցաւ:.

7). Թիֆլիսի բարբառում կայ արաբական այբուբենի 21րդ եւ վրացական 27րդ տառին համապատասխանող կարճ կոկորդային մի հնչիւն, որ դործ է ածւում փոխ առնւած բառերի մէջ: Սովորաբար այդ հնչիւնը նշանակում են Ղ նշանով:

8). Շեշտը ընկնում է միշտ նախափերջին վանկի վրա:

Թիֆլիսի բարբառի հնչիւնաբանութեան այս առանձնայատկույթիւնները ի նկատի են առնւած ամենից առաջ բնագիւրնների հրատարակիչների կողմից: Սայեաթ Նովայի համար՝ Ախվերդեանը, Տէր-Աղեքսանդրեանը եւ Գ. Ասատուրը, իսկ Գ. Սունդուկեանցի համար՝ հեղինակը ինքը, որ 1863 թ. սկսած իր ամէն մէկ թատերախաղը լոյս ընծայելիս՝ նշանակեւ էր Ե եւ Ղ հնչիւնների, առանձնայատկութիւնները, իսկ մնացածները մտցնում էր բնագրի մէջ: Բացի այդ, կան եւ մի շարք ուրիշ բանասէրներ, որոնք զբաղւել են Թիֆլիսի բարբառի հնչիւնաբանութեան հարցով:

Այստեղ յիշենք հետեւեալները.

Peterman, Ueber den Dialekt der Armenier von Tiflis, Berlin 1867, page 64-65

բ). Թումսն, «Թիֆլիսի՝ քաղաքի արդի հայերէն լեզուի պատմական քերականութիւնը», Պետերբուրգ, 1890 (ոուսերէն): (հնչիւնների ուսմունքն):

Adjarian, "Classifications des dialects armeniens", Paris, 1909, p, 22.

դ) . Ամստերդամ, «Հայ բարբառագիտութիւն», Մոսկովա, 1911, էջ. 53-54:

Բոլոր այս ասածից պարզ է, որ նոր խմբագիրների առջեւ դրած էին հնչիւնաբանական խիստ ծանրակշիռ հարցեր, եւ նրանք կատարեալ հնարաւորութիւն ունէին ծանօթանալու, կամ գոնէ պարտաւոր էին նկատողութեան առնել այդ հարցերը, մանաւանդ որ նախորդ բոլոր հրատարակիչները ամէն կերպ հրաւիրել են նրանց ուշադրութիւնը հնչիւնաբանական այդ խնդիրների վրա:

Արդ՝ ինչպէ՞ս են վարւել մեր խմբագիրները:

Ի. Գ. Լեւոնեանը իր հրատարակութիւնը պատրաստելիս ձեռքի տակ է ունեցել Սայեաթ Նովայի եւ նրա որդի Օհանի երկու «Դաւթար»-ների լուսանկարները եւ երեք խումբ տպագրւած բնագիրներ. 1) Ախվերդեանի՝ առաջին 46 երգերը, 2) Տէր-Աղեքսանդրեանի՝ № 55 եւ 56 երգերը եւ 3) Գ. Ասատուրի՝ № 47-54 երգերը: Մնացած չորս երգերի մասին ես կարծիք չայտնել չեմ կարող, քանի որ չեմ տեսել նրանց բնագիրը:

Ա. Պէտք է ասել, որ թէեւ Գ. Լեւոնեանի բոլոր երեք նախորդներն էլ կարճ կողորդային հնչիւնը կ զնում են ղ նշանով եւ որ ինքը Սայեաթ Նովան էլ այդ հնչիւնը արտայայտելու համար գործ է ածել վրաց այբուբենի 27րդ տառը. հակառակ այդ բանի Լեւոնեանը զեկ եւ Ղարուլ գրում է միեւնոյն տառով: Որով հնչիւնին անձանօթ ընթերցողը դատապարտւած է հնչելու անհեթեթ կերպով:

Բ. Ձայնաւորի առջեւ վ արտասանւող ու տառը Սայեաթ Նովան նշանակում է վրացերէն վ տառով: Ախվերդեանը սովորաբար գրում է վ տառով (էրված իմ): Միայն Աստված բառի մէջ, երեւի ի յարգանս բառի, գործ է ածում գրական ձեւը՝ Աստուած: Որ այստեղ ու տառը վանկային չէ, այլ սովորական վ, Լեւոնեանը կարող էր տեսնել թէկուզ Աստուած բառը ունեցող ուսանաւորների վանկերի քանակից:

Գ. Ասատուրը նոյն հնչիւնը նշանակում է շեղադիր ու-ով եւ բացատրում, թէ ու-ն այստեղ վանկային տառ չէ եւ չպէտք է շրջիւթի գրական արտասանութեան հետ (ըվ): Ոչ հրատարակիչների նանախադրուշացումները, ոչ էլ հեղինակի ուղղագրութիւնը չեն օգնել Գ. Լեւոնեանին: Նա Ախվերդեանի հրատարակած երգերում գրում է «էրվում իմ» եւ «Աստուած», իսկ Գ. Ասատուրի երգերում՝ «էրուած», «Աստուած» եւ ոչնչով չի նշում այս ոչ-վանկային ու-ն:

Գ.— Աւելի վատ է խնդիրը դրական ե տառի նկատմամբ, որ միավանկ բառերի սկզբին դառնում է յի (մայիս)։ Սայեաթ Նովան այս հնչիւնը արտայայտում է վրացերէն ի տառով (200 տարի առաջ կարելի էր ուղղագրութեան մէջ հնչիւնական աւելի նմանութիւն երեւակայել)։ Ախմերզեանը իր հրատարակութեան մէջ գրում է ե, բայց խնդրում է կարգաւ ըի։ Սունդուկեանը գրում է ե՝ նշանով եւ խնդրում է կարգաւ յի (մայիս)։ Տէր-Աղեքսանդրեանն էլ գրում է ի՝ նշանով, որ կարգացւում է յի։ Գ. Լեւոնեանը այստեղ էլ մոլորեւ է։ Ախմերզեանի երգերը նոր ուղղագրութեամբ նա գրում է յե արտասանութեամբ. «դու մի լաց լի, յիս իմ լալու»-ի փոխարէն նա գրում է՝ «յես իմ լալու»։ Տէր-Աղեքսանդրեանի «Սայեաթ Նովէն ասաւ՝ յիս կարմիր կով իմ» Լեւոնեանի մօտ դարձել է՝ «իս կարմիր կով իմ»։ Գ. Լեւոնեանը չի սխալւել միայն Գ. Ասատուրի երգերի մէջ, ուր գործ է ածւում յի՝ «յիս վարթըն իմ, մին խար չունիմ» (№ 49)։

Դուրս է գալիս, ուրեմն, որ Գ. Լեւոնեանը սխալներ չի արել ու մոլորութեան մէջ չի ընկել միայն այնտեղ, ուր սխալւելու ոչ մի հնար չէր թողնւած։ Սխալւելու միւս բոլոր կարելիութիւնները նա օգտագործել է «հարկը տոկոսով»։ Քանի որ խօսքը Թիֆլիսի բարբառի մասին է, թոյլ եմ տալիս ինձ օգտւելու նոյն բարբառի մի պատկերաւոր խօսքից բնորոշելու համար Գ. Լեւոնեանի արածը։ Դա բառիս բուն նշանակութեամբ բաղնրսի բօխչա է։*)

Մի բան որ անկեղծօրէն ցաւալի է։ Մարդը այնքան ջանք ու սէր է դրել իր գործի մէջ։ Ինքը՝ զաւակը առաջնակարգ աշուղի (Զիւլանի), աշուղների ստեղծագործութեան սիրահար եւ նոյն իսկ մասնագէտ՝ նա ջերմ երկրպագու է Սայեաթ Նովայի։ Դնել մի գործի մէջ այսքան սէր ու աշխատանք եւ վերջը փչացնել — էրօք որ ծանրը ողբերգութիւն է։

II.— Աւելի լաւ դրութեան մէջ չէ եւ Գ. Սունդուկեանցի ամբողջական երկերի հրատարակութեան գործը, թէեւ այդ հրատարակութեան խմբագիր Սեդր. Յարութիւնեանի վիճակը անհամեմատ աւելի նպաստաւոր էր։ Նա իր տրամադրութեան տակ ունէր հնչիւնականութեան տեսակէտից հէնց հեղինակի մշակած բնագիրները։ Մընում էր միայն այդ բնագիրները վերածել նոր ուղղագրութեան, մի աշխատանք, որ ոչ մի դժւարութիւն չի ներկայացնում։

Իր վերաբերումը դէպի Թիֆլիսի բարբառի հնչիւնաբանութեան

*) Ըստ Սումգուկեանցի (Երկեր, էջ 251) «բաղնրսի բօխչա» Թիֆլիսի ռնով փոխարինարար նշանակում է՝ «խայտառակ գործերի ժողովածու»։

արտայայտութիւնը Յարութիւնեանը ցոյց է տւել «Խմբագրողի կողմից» յառաջաբանում, ուր մատնանշելով Սունդուկեանցի ընդունած ղ՝ նշանով եւ Ե՝ նշանով հնչիւնները, ասում է հետեւեալը. «Մենք պահպանել ենք Թիֆլիսի եւ յատկապէս Սունդուկեանի լեզուական ուղղագրութեան տարբեր ձեւերը եւ կէտագրական մի քանի առանձնայատկութիւններ»:

Հեղինակի ուղղագրութեան պահպանման միտքը զեղեցիկ է եւ միանգամայն գովելի, որովհետեւ Սունդուկեանցը բարբառի օգտագործման հնարաւորութիւնը հասցրել է այնպիսի բարձրութեան, որին ուրիշ ոչ մի հեղինակ հայկական որեւէ բարբառում չի հասած:*) Կարճ կոկորդային հնչիւնի համար նա պահել է Սունդուկեանցի որդեգրած ղ՝ նշանով տառը, որ միանգամայն տեղին է: Մնւնդուկեանցի գործածած Ե՝ նշանով հնչիւնի մասին յայտնում է, թէ ինքը պահել է Սունդուկեանցի ձեւը, մինչդեռ եթէ լաւ մտածէր, այդպէս պիտի չվարէր:

Երբ Սունդուկեանցը մշակում էր Թիֆլիսի բարբառի հնչիւնների գրութեան ձեւը, աւելի քան 70 տարի առաջ (1863 թ.), խնդիրը բաւական բարդ էր: Նա նշանով Ե՝-ն (յի մայիս բառի մէջ) չէր կարող նշանակել յի, որովհետեւ յ տառը բառի սկզբում հնչում էր որպէս հ: Շփոթութիւնից խուսափելու համար նա գտել է նոր ձեւ՝ ընդունելով Ե՝ նշանով տառը՝ նախազգուշացնելով միշտ, թէ պէտք է արտասանել այնպէս, ինչպէս յի մայիս բառի մէջ:

Յարութիւնեանը Սունդուկեանցի Ե՝ նշանով տառի տեղը գործ էածում յԵ՝ նշանով, որ բոլորովին սխալ է, որովհետեւ յե տառ չէ, այլ արտասանութեան նշան — երկբարբառ (դիֆթոնգ), որ արտայայտում է Սունդուկեանցի ուղղագրութեամբ արտայայտած հնչիւնից շատ հեռու գտնուող հնչիւնների մի խումբ: Այս երկբարբառի վրա դրւած նշանը անտեղի է, որովհետեւ գրանով Յարութիւնեանը երկբարբառը հնչիւնների մի խմբից հանում է եւ դնում մի ուրիշ խմբի մէջ, որի համար պէտք է գտնէր առանձին նշան:

Այն ինչ խնդիրը նոր ուղղագրութեամբ լուծւում է շատ պարզ:

*) Բաւական է աչքէ անցկացնել Մովսէսի Ժորժ Դանդեմի քարգամնութիւնը, ուր Սանդուկեանցը ցոյց է տւել, որ իմքը ոչ միայն լաւ է ըմբռնում քարգամնիչի դերը եւ նմանը չունեցող վարպետ է բարբառի ձեւերը գործածելում, այլ եւ կարողացել է ընդարձակել բարբառի բառամբերքը, լայնօրէն օգտւելով գրաբառի անսպառ աղբիւրից եւ վերջինիցս առած բառերին տալով Թիֆլիսի բարբառի ձեւ: Նման կատարելութիւնից շատ հեռու է նոյնիսկ Գամառ Քաթիպայի պէս մեծապէս օժտւած մի տաղանդ նոր — Նախիջեւանի բարբառով գրած իր պատմութեանը մէջ:

Նոր ուղղագրութեան յ տառը բառերի սկզբին ձայնաւորներէ առաջ ալլեւս չի գործածուած եւ տեղը ընդունւած է հ (յիշել – հիշել) : Յ տառը մնացել է մէկ արտասանութեամբ, որ համապատասխանում է լատիներէն *y*-ին : Ա-ից առաջ յ-ն հնչում է ինչպէս լատիներէն *ya* (յա) եւ փոխարինում է առաջւայ եա-ն. ու-ից առաջ տալիս է *yu* (յու) եւ փոխարինում է առաջւայ իւ-ն, իսկ ի-ից առաջ՝ *yi* (յի) (մայիս բառում), այսինքն՝ ճիշտ այն հնչիւնը, որ Սանդուկեանց նշանակել է Է՛նչանով : Եւ Յարութիւնեանը այդպէս էլ պէտք է գրէր, որովհետեւ նոր ուղղագրութեամբ այդ է միակ ձեւը խնդրի առարկայ հնչիւնը արտայայտելու համար : Իսկ Յարութիւնեանի տւած բացատրութիւնները ցոյց են տալիս, որ նա պահանջած լրջութեամբ չի մտածել հարցի մասին, կամ ի վիճակի էլ չէր մտածելու : Վերջինը թւում է աւելի հաւանական եւ ահա թէ ինչու :

483–488 էջերի վրա Յարութիւնեանը տպել է Սունդուկեանցի առաջին բանակուային յօդւածը, որ գրւած է Թիֆլիսի բարբառով իբրեւ մատուցած եւ տպւած է «Մեղու Հայաստանի»-ի 1863 թ. № 43–ում :*) Այս մատուցածը գրւած է ի պատասխան մի քննադատութեան, որ Գ. Տ. Ա. *) նոյն թերթում տպել էր Սունդուկեանցի «Գիշերվան Սարըը խէր է» անդրանիկ թատերգութեան առթիւ : Այդ մատուցածում Սունդուկեանցը տալիս է երկար կտորներ «Գիշերվան Սարըը խէր է»-ից : Յարութիւնեանը այդ մատուցածը, կը-տորներ էլ մէջը, տպում է վերոյիշեալ Տէր – Աղեքսանդրեանի «Մեղու Հայաստանի» ում գործածած ուղղագրութեամբ : Եթէ նա լուրջ մտածած լինէր, այդպիսի բան, ի հարկէ, չէր անի : Իսկ եթէ գիտակցօրէն է արել, ի յարգանս «Մեղու – Հա – յաստանի»-ի, ապա խիստ տարօրինակ է նման մի յարգանք մարքսիստի կողմից դէպի պահպանողական «Մեղու»-ն :

Այսպէս թէ այնպէս, Թիֆլիսի բարբառի յի հնչիւնը արտայայտելու համար երկու հրատարակութիւնների խմբագիրների մօտ մենք գտնում ենք հիմն գրութեան ձեւ՝ *յե*, ի, ի՛ նշանով, յե՛ նշա-

*) Անբնութեանի նկատմամբ Յարութիւնեանը այս հետաքրքրական պատմագրական տեսակետ արտայայտող մասլահաթը գտնելով է ոչ թէ Սանդուկեանցի երկերի բնագրում, այլ իր սեփական ծանօթութիւնների մէջ, առանց գէր որ եւ է ձեւով ընդգծելու, որ չկարչի ծանօթութիւնների մէջ :

**) Ըստ երեւոյթիմ Գեորգ Տէր-Աղեքսանդրեան, Թիֆլիսի բարբառին լատգոյն հեղինակութիւններից մկըր, որ հետագային լոյս ընծայեց իր «Թիֆլիզեցոյ մտաւոր կեանք»-ը գիրքը :

նով եւ պատահարար յի ուղիղ ձեւը: Սրան ասում են՝ Embarras des Richesses.

Գ. Լեւոնեանի «բաղնիսի բօխչայի» մէջ իր կողմից Յարութիւնեանն էլ բաւական բան է դրել: «Խայտառակ գործերը» առատութեամբ թափւում են այդ բօխչայից:

Ինչպէս երեւում է Գ. Սունդուկեանցի երկերի կողքի վրայի մակագրութիւնից, Ս. Յարութիւնեանի դէլիսն, մի տեսակ խնամակալի գերում, կանգնած է եղել պատասխանատու խմբագիր Նդիչէ Զաքենցը, որ, սակայն, ոչ մի լաւ բառով չի արտայայտել իր գոյութիւնը: Ո՛վ է եղել Սայեաթ Նովայի երկերի հրատարակութեան խնամակալը, մեզ յայտնի չէ, բայց նա էլ սլակաս ծոյլ ու դատարկապորտ չի եղել, քան Զարենցը:

Իբրեւ հետեւանք խմբագիրներին ու խնամակալներին թափած միացեալ ջանքերի բոլորովին փչացած են հրատարակութիւնները մեր երկու առաջնակարգ հեղինակների, որոնք դրել են Թիֆլիսի հիանալիօրէն մշակւած բարբառով: Նրանց այդ վարմունքից նիւթապէս ու բարոյապէս տուժել է Հայպետհրատը, բայց աւելի՝ հայ մշակոյթն ու հասարակութիւնը:

Փարիզ.

